

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայ լեզվաբանությունն ունի հարուստ պատմություն. ամենահին լեզվաբանական դիտողությունները վերաբերում են V դարին: Եվ իրավամբ գրերի գյուտը ենթադրում էր լեզվաբանական մտքի որոշակի հասունություն: Այդ առավել ակնհայտ դարձավ որոշ ժամանակ հետո՝ կապված Դիոնիսիոս Խրակացու քերականության հայերեն թարգմանության հետ: Իր հերթին «Քերականության արվեստի» հայերեն թարգմանությունը և նրա մի քանի դարերի մեկնությունները լուրջ խթան հանդիսացան հայ լեզվաբանական մտքի հետագա զարգացմանը:

Հենց կազմավորման շրջանից իսկ սկսած հայ լեզվաբանությունը լեզվի գիտության տարբեր բնագավառներում տվեց մեծարժեք դրոշմեր: Միաժամանակ ստեղծվեց լեզվաբանական այնպիսի տերմինաբանություն, որը մասնակի բացառություններով պահպանվում է ցայսօր և այժմ էլ անկաշկանդ կերպով ապահովում է լեզվաբանական հասկացությունների ճիշտ ըմբռնումն ու գնահատումը:

Իր հիմնական կողմերով հայերենագիտությունը՝ ունենալով ինքնուրույն պարզացում, շուրջ մեկ ու կես հազարամյակի ընթացքում կուտակել է բազմահարուստ հետազոտություններ, լեզվի տեսության ու հայերենի գործնական խնդիրներին վերաբերող պատմական ու արդիական նշանակությամբ գործեր:

Ահա այդ վիթխարի ժառանգության գիտական-մարքսիստական վերլուծությունը, արժեքավորումն էլ սովետահայ լեզվաբանության կարևորագույն պրոբլեմներից մեկն է: Այդ հարցերի գիտական լուսարանման համար շնորհակալ աշխատանք է կատարել պրոֆ. է. Բ. Աղայանը իր՝ վերջերս լույս տեսած «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատությամբ¹:

Աշխատության մեջ ընդգրկված պրոբլեմները վաղուց դիտված են իբրև ընդհանուր լեզվաբանության պատմության առանցքային խնդիրներ: Հայտնի է, որ ընդհանուր լեզվաբանության պատմության հարցերը միայն մասնակի լուսաբանում են ստացել այս կամ այն լեզվաբանի, լեզվաբանական դպրոցի կողմից: Այդ հարցերի վերաբերյալ առանձին ուսումնասիրություն ունի Տոմսենը, որը սակայն այլևս չի կարող բավարարել լեզվի գիտության նոր պահանջները: Լինելով ոչ ամբողջական, համառոտ ուսումնասիրություն՝ այն չի ընդգրկում նորագույն լեզվաբանական դպրոցները, ուղղությունները, և հեղինակը լեզվաբանության պատմության շատ հարցեր քննում է ըստ հին ըմբռնումների: Տոմսենը այդ բանը իրականացնել նույնիսկ չէր էլ կարող, քանի որ ընդհանուր լեզվաբանության պատմություն իսկականում կարելի է տալ միայն առանձին լեզուներին վերաբերող համապատասխան աշխատությունների առկայության դեպքում:

Բացի այդ լեզվաբանության պատմության պրոբլեմները անցյալում քննվել են մեծ մասամբ բանասիրական կամ պատմական հետազոտությունների մեջ, փրկե նրանց մասնավոր խնդիրներ: Այդ բանը կարող ենք հաստատել հենց ուսերենի ուսումնասիրության պատմության վերաբերող փաստերով: Այդ տիպի աշխատանքներում իբրև բացառություն կարելի է նշել առան-

¹ Է. Բ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հատոր 1, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1958:

ձին հողվածներ, որ սակայն հարցերի ընդգրկման տեսակետից հիմնականում սակավարժեք են:

Պրոֆ. է. Բ. Աղայանի «Հայ լեզվաբանության պատմությունը» այս տեսակետից մի լուրջ ներդրում է, որը հնարավորություն կտա հայերենագիտությանը հետաքրքրվողներին, լեզվի մասնագետներին ամբողջական պատկերացում ստանալու հայ լեզվաբանության պատմության, մասամբ և ընդհանուր լեզվաբանության պատմության առանցքային խնդիրների մասին:

Գրախոսվող աշխատության մեջ (1-ին հատորը) շարադրված է հայ լեզվաբանական ուսմունքների պատմությունը սկզբից մինչև XIX դարի վերջերը: Հեղինակը նյութը բաշխել է երեք շրջանների մեջ: Առաջին շրջանն ընդգրկում է հայ լեզվաբանության կազմավորումից մինչև համեմատական լեզվաբանությունը, երկրորդ շրջանը՝ համեմատական լեզվաբանությունը, երրորդ շրջանը՝ սովետահայ լեզվաբանությունը: Հայ լեզվաբանության պատմության համամասն բաժանում նկատի է ունեցել նաև պրոֆ. Ա. Ղարիբյանը իր մի հողվածում (ՀՍՍՌ ԽՍ Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1945, 1—2, էջ 35—56):

Քննարկվող հատորում հարցերը լուսարանվում են լեզվաբանական ուղղությունների դպրոցների բնութագրումներով: Հեղինակը ղեկավարվել է դպրոցների այն բաժանումով, որ կատարել է Հ. Աճառյանը «Հայ լեզվաբանության անցյալն ու ներկան» հողվածում (Ոստան, 1911, 1, էջ 37—43): Հ. Աճառյանն ընդունել է 7 դպրոց, որը սույն աշխատության մեջ համալրված է այլ դպրոցներով:

Լեզվաբանների խմբավորումները նշված դպրոցներում կատարված են ըստ ուսումնասիրվող հեղինակի հայացքների, տեսական ըմբռնումների: Հնարավորին չափ ուսումնասիրված են տվյալ դպրոցի բոլոր հեղինակները՝ չնչին բացառություներով: Աշխատության սկզբում հեղինակը բերում է հայ լեզվաբանության պատմությանը վերաբերող մատենագրություն, իսկ ներածության մեջ տալիս է ընդհանուր լեզվաբանության համառոտ պատմությունը՝ մատուցվող նյութը պարզորոշ դարձնելու նպատակով:

Պրոֆ. է. Բ. Աղայանը լեզվաբաններին խմբավորում է ըստ դպրոցների՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի այն ըմբռնումը, որ նա ունի հայերենի ծագման կամ ծագման ու ցեղակցության վերաբերյալ: Մեզ հայտնի է հնում տարածում գտած այն կարծիքը, համաձայն որի հայերենը առաջացել է բարելոնյան խառնակությունից, իսկ այդ կարծիքի հիմքում ընկած է Աստվածաշնչի մի առասպել: Այն լեզվաբանները, որոնք ընդունում էին հայերենը իրեն աշտարակաշինության շրջանից առաջացած լեզու, կազմում են հայ լեզվաբանության առաջին դպրոցը:

Պրոֆ. է. Բ. Աղայանը ցույց է տալիս, որ շնայած աստվածաբանական, ոչ գիտական ելակետին, հայ լեզվաբանության առաջին դպրոցի ներկայացուցիչները ևս իրենց գործունեությամբ նշանակալից դեր են կատարել հայերենի գործուն օրինաչափությունների բացահայտման, պարզաբանման խնդրում: Նրանց նույնպես զրադեցրել են լեզվի թե՛ տեսական, թե՛ գործնական բնագավառները: Այդ շրջանի գործիչներին, օրինակ, հետաքրքրել է առարկայի և նրա հնչյունական անվանման փոխհարաբերության հարցը, մի հարց, որ իր ժամանակին երկար վիճարանությունների տեղիք է տվել հին հույների մոտ:

Հեղինակը ամենայն մանրամասնությամբ քննում է նշված շրջանում եղած քերականական աշխատանքները և ցույց է տալիս ոչ միայն այն ընդհանուրը, որ հայերը ունենին հույների հետ, այլև այն յուրահատուկը, որ բնորոշ էր հայ մեկնիչ-քերականներին: Աշխատության մեջ իրավացիորեն հայ մեկնիչ-քերականները չեն դիտված սոսկ որպես հունական քերականությունները ընդօրինակողներ. ընդգծված է հայ քերականության ինքնուրույն զարգացումը, որոշված է նաև եղած ազդեցությունների շրջանակները:

Հայ լեզվաբանության երկրորդ դպրոցի հատկանշական գիծը համարված է այն, որ այդ դպրոցի ներկայացուցիչները (Հ. Ղուկաս Ինճիճյան, Սքրոդեր Մխիթար Սեբաստացի, Միքայել Չամչյան և ուրիշներ) գործնական ու քաղաքական որոշ նկատառումներով ջանում էին հայերենը իբրև նախամայր լեզու ներկայացնել: Սրանց ըմբռնումների հիմքում ընկած էր Աստվածաշնչի մի այլ առասպել, ըստ որի Նոյը փչել է Հայաստանում և հայերենը պահպանել է նրա լեզուն: Պրոֆ. Աղայանը օրինակներով ցուցադրում է այն «փաստարկները», որոնցով առաջնորդվում էին այդ դպրոցի ներկայացուցիչները: Սակայն նա ըստ արժանվույն գնահատում է հայերենի քերականության բնագավառում նրանց կատարած բեղմնավոր աշխատանքը: Ընդգծվում է, որ այդ դպրոցը հայ լեզվաբանության պատմության մեջ հայտնի է ամենից առաջ այն շնորհալի հայերենագիտական հետազոտություններով, որոնց զգալի մասը մինչև այժմ էլ չեն կորցրել իրենց գործնական նշանակությունը: Այսպես՝ այդ դպրոցի գործիչներ Ավետիքյանի, Սյուրմելյանի, Ավգերյանի ջանքերով հրապարակ եկավ Նոր Հայկազյան բառարանը, որ նշանակալից երևույթ էր հայագիտության պատմության մեջ:

Աշխատության երկրորդ մասում ուսումնասիրված է հայ լեզվաբանության պատմության երկրորդ շրջանը: Սա արդեն համեմատական լեզվաբանության շրջանն է: Հեղինակը առանձնակի խնամքով տւ հոգատարությամբ է մշակել աշխատության այս բաժինը: Այդ այդպես էլ պետք է լիներ, քանի որ այդ շրջանում է հիմնադրվում գիտական լեզվաբանությունը, իսկ լեզվաբանական ուսումնասիրությունների ելակետը լեզուների ուսումնական զարգացման ընդունումն է:

Պրոֆ. Աղայանը հայ լեզվաբանության երրորդ դպրոցի հատկանշական կողմը համարում է այն, որ այդ դպրոցի ներկայացուցիչները, հայերենը համարելով հնդեվրոպական լեզու, այն հասկացնում են արիական-իրանական լեզվաճյուղին, իբրև իրանական մի բարբառ:

Հեղինակը մեծ տեղ է հատկացնում նշված ուղղության հիմնադիրներ Հ. Պետերմանին և Ֆ. Վինդիշմանին: Այս հատվածում բնութագրված են նաև այդ դպրոցի ականավոր գործիչներ խ. Արուվյանը, Պ. Լազարը, Ռ. Գոշեն, Ֆ. Բոպպը, Ֆ. Մյուլլերը և ուրիշներ:

Պրոֆ. Աղայանը առավել մեծ գնահատական է տալիս հայ լեզվաբանության շրջորդող դպրոցի ներկայացուցիչներին, հատկապես այդ դպրոցի հիմնադիր Հայնրիխ Հյուբշմանին, որը վերջնականապես անհերքելիորեն ապացուցեց հայերենի ինքնուրույն հնդեվրոպական լեզու լինելը և գիտականորեն հիմնավորեց հայերենի տեղը հնդեվրոպական լեզվա-ընտանիքում:

Աշխատության սույն հատորի վերջում հեղինակը անդրադառնում է նաև այլ դպրոցների: Քննության է առնված այն լեզվաբանների գործունեությունը,

որոնք ջանում էին հայերենը թուրաճյան լեզու համարելու, խնչպես և Կարսի ղարոցը, որը հայերենը համարում էր պելասգյան լեզու՝ Պրոֆ. Աղայանը հանդամանորեն ցույց է տալիս այդ տեսությունների անհիմն լինելը:

Աշխատության քննարկվող հատորը աչքի է ընկնում փաստական հարուստ նյութով և տեսական լուրջ մեկնաբանումներով:

«Հայ լեզվաբանության պատմություն» հաջողված լինելը և նրա նշանակությունը հայագիտության համար անառարկելի են: Պետք է ընդգծել, որ հայ լեզվաբանական վիթխարի ժառանգության ամփոփումը, նրա գիտական գնահատումը շատ դժվարին, բայց նաև շատ շնորհակալ աշխատանք է: Այդ գործի առաջին մասի հաջող ավարտումը անկասկած պատիվ է բերում հեղինակին:

Անհրաժեշտ ենք գտնում նշել, որ հարցադրման և որոշ հետևությունների մեջ կարող են լինել տարբեր մոտեցումներ: Այսպես՝ մենք կարծում ենք հայ լեզվաբանների խմբավորումը ըստ ղարոցների և հարցի միայն այդ ասպեկտով քննությունը որոշ անհարթությունների տեղիք է տվել: Ոչ բոլոր լեզվաբաններին, լեզվաբանական գործիչներին կարելի էր ուսումնասիրել նրանց առանձին ղարոցների մեջ ներառելով: Ահա թե ինչու մեզ համար անհասկանալի է մնում, ասենք, այն, որ Մ. Նալբանդյանը հայ լեզվաբանության երրորդ ղարոցի մեջ է: Նալբանդյանի տեղը հայ լեզվաբանության պատմության մեջ չի բնորոշվում ըստ այն ըմբռնման, որ հայերենը իրանական լեզվաճյուղին է պատկանում, իրանական մի բարբառ է, թե ոչ: Այս հարցադրումը, իհարկե, չի վերաբերում միայն Նալբանդյանին:

Այս կապակցությամբ նշենք մի մոմենտ ևս: Լեզվաբանական ուսմունքների պատմությունը լեզվաբանության պատմության էական բնագավառը լինելով, դեռևս չի սպառում այն: Հեղինակը հակամետ է եղել քերականական ուսմունքի պատմական զարգացումը համառոտել այն հիմնավորումով, որ քերականության պատմությունը իր նպատակադրումից դուրս է: Մինչդեռ լեզվաբանության կարևորագույն սյուներից մեկը քերականության ուսմունքն է, քերականության պատմությունը: Լեզվաբանության պատմությունը պետք է ընդգրկի լեզվի գիտության հիմնական բաժինների (հնչյունաբանություն, խմաստաբանություն, բառադիտություն, քերականություն, ոճաբանություն) պատմությունը, ամփոփի այն: Աշխատության մեջ նկատելի է այս իմաստով որոշ տարրնթացություն:

Լեզվաբանությունը լեզվի ուսումնասիրության մեթոդների, եղանակների, լեզվաբանական հետազոտությունների արդյունքների քննադատական վերլուծության պատմությունն է: Այդ նշանակում է, որ այն չի կարող անցնել այն ուղղությունների, ղարոցների կողքով, տրոնց տեսական ըմբռնումները նշանակալի (եթե չասենք վճռական) դեր են խաղացել այդ առարկայի ընդհանուր տեսական զարգացման գործում: Սակայն լեզվաբանության պատմության մեջ առաջին պլանի վրա չպետք է մղվի միայն լեզվաբանական ուղղությունների վերլուծությունը, քանի որ շատ հաճախ դրանց բաժանադիժը մի շատ մասնավոր, երբեմն ոչ էական կարծիք է: Այսպես, օրինակ, հայերենը բաբելոնյան խառնակությունից առաջացած լեզու կամ նախամայր լեզու լինելու կարծիքները ոչնչով չէին բնորոշում այդ կարծիքներն ունեցող լեզվաբանների այլևայլ կամ նույնատեսակ հետազոտությունների քնույթը:

Լեզվաբանությունն ունեցել է բանասիրական, բանասիրական-էմպիրիկ

վարդացման, այնուհետև՝ պատմական, պատմա-համեմատական զարգացման շրջաններ: Կարծում ենք, հարցադրման այս կարգը մի շարք դեպքերում ավելի նպատակահարմար է, քան սոսկ առանձին դպրոցների գնահատման կարգը՝ մասնավոր հարցի շուրջը:

Վերջում ցանկանում ենք ուղադրություն հրավիրել հետևյալի վրա:

Հայագիտության պատմության հետաքրքրվողի համար կան յուրատեսակ դժվարություններ: Այսպես՝ հայերենագիտությանը վերաբերող մի մասնավոր հարցի ուսումնասիրության պատմությունը հատկապես երիտասարդ հայագետին ստիպում է դիմել բազմաթիվ աղբյուրների, որոնք ոչ միայն կարող են լինել տարբեր լեզուներով, այլև որ այդ հարցին անդրադարձած հեղինակները կարող են պատկանել տարբեր ուղղությունների (որտեք այնքան էլ քիչ չեն): Դրան ավելանում է նաև օգտագործված տեղեկանքայինության երբեմն խառն, անմիասնական լինելը, որը ինքնին դժվարամատույց է դարձնում նյութը: Պրոֆ. է. Բ. Աղայանը հաղթահարել է այդ դժվարությունը, նյութը դարձրել է դյուրամատչելի (հատկապես մեթոդորգիայի ուղղությամբ): Այս տեսակետից՝ լեզվի պատմությունը ուսումնասիրողի համար քննարկվող աշխատությունն առաջին հիմնալի տեղեկատու է:

Հայագիտական բազմաթիվ հետազոտություններ, որոնք առանձին գլուխով լույս չեն տեսել և ցրված են հայ և օտար պարբերականներում, չեն կարող մեր հասարակայնության սեփականությունը դառնալ և իբրև անցյալի ժառանգություն օգտագործվել, առանց այդ գործերի ամբողջական բնութագրման, առանց դրանց մարքսիստական գնահատման: Այս իմաստով «Հայ լեզվաբանության պատմությունը» անցյալի հայերենագիտական ժառանգության առաջին գիտական ամբողջական գնահատությունն է:

Հեղինակը յուրաքանչյուր լեզվաբանի մասին տալիս է ամփոփ շարադրանք, հեղինակի գործունեությունը՝ կենսագրական տեղեկություններով, տեսական ըմբռնումներ, հետազոտական մեթոդը: Տրվում է և՛ այն, ինչ բնորոշում է տվյալ հեղինակին, ինչ առաջադիմական է, ընդունելի, և՛ այն, ինչ արժեքավոր չէ, անընդունելի է, կամ ունի միայն պատմական արժեք: Շարադրանքն ընդհանուր առմամբ քննադատական, վերլուծական է, թեև առանձին հատվածներում այն ունի պոզիտիվ բնույթ:

Պրոֆ. է. Բ. Աղայանի «Հայ լեզվաբանության պատմությունը» հայագիտական արժեքավոր ուսումնասիրություն է: Կարծում ենք, որ հեղինակը նույնպիսի բարեխղճությամբ կպատրաստի և լույս կընծայի աշխատության 2-րդ հատորը:

Ն. Զ. ՊԵՏՐՈՍՅԱՆ